ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար, արդարադատության գնդապետ Դավիթ Բեգինյանի Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Դավիթ Բեգինյան:

Գործուղված պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա), 2019 թվականի հուլիսի 30-ից օգոստոսի 2-ը ներառյալ:

Հրավիրող կողմը՝ Ռուսաստանի Դաշնության դատական պրիստավների դաշնային ծառայություն:

Գործուղման նպատակը՝ մասնակցելու՝ Հարկադիր կատարման ոլորտի հիմնախնդիրներին նվիրված հոբելյանական 10-րդ միջազգային գիտագործնական համաժողովին:

Քննարկված թեմաներ՝ «Հարկադիր կատարում. ներկա իրավիճակ և զարգացման վեկտորներ». տարբեր երկրներում հարկադիր կատարման համակարգերի կատարելագործման ոլորտում գրանցված ձեռքբերումների, զարգացման հեռանկարների, խնդիրների վերհանման վերաբերող հարցեր:

Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Բեգինյանը 31.07.2018թ. առանձին հանդիպում է ունեցել ՌԴ դատական պրիստավների դաշնային ծառայության տնօրեն-ՌԴ գլխավոր դատական պրիստավ Դմիտրի Արիստովի հետ:

Կողմերը քննարկել են երկու երկրների ծառայությունների միջև համագործակցության ակտիվացման անհրաժեշտությունը, մասնավորապես քննարկվել է ՌԴ դատական պրիստավների դաշնային ծառայության և ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև ստորագրվելիք համագործակցության հուշագրի նախագծի դրույթները: Պայմանավորվածությունն է ձեռք բերվել հուշագիրը ստորագրել 2019թ. նոյեմբերին կայանալիք Դատական կատարողների միջազգային միության լիագումար նիստի ընթացքում:

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար, արդարադատության գնդապետ Դ. Բեգինյանը 02.08.2019թ. Մոսկվայում ելույթ է ունեցել գիտագործնական համաժողովին՝ ներկայացնելով ոչ գույքային բնույթի կատարողական վարույթների կատարման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում՝ մասնավորապես նշելով իրավական կարգավորումները և Ծառայության իրավակիրառ պրակտիկան:

Ներկայացնելով վերը նշված բնագավառում արդի խնդիրները՝ Դ. Բեգինյանը ընդգծել է ոչ գույքային բնույթի կատարողական վարույթների կատարման ժամանակ առաջացող կատարողական գործողությունների կատարման ծախսերի հետ կապված հարցերը:

Աշխատանքային այցի ընթացքում ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատարն առանձին հանդիպումներ է ունեցել Դատական կատարողների միջազգային միության նախագահ Մարկ Շմիցի, ինչպես նաև Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարման գլխավոր վարչության ղեկավար Դմիտրի Կովալենկոյի հետ:

Զրուցակիցները քննարկել են հետագա համագործակցության խորացման հեռանկարները:

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ

Դ. ԲԵԳԻՆՅԱՆ